



13. ՊԱՍՐԱՅՈՒ ԹԱՔՎՈՐԻ ՏՂԵՆ

Մի թաքավոր կեղի, ինքն էլ մեկ կնիկ կունենա: Մեկ տղա կեղի իրեն, անուն կը դնե Ահմատ:

Ուրիշ տերությունը կելի եղ թաքավորի վրեն, կրիվ կենե: Ըղրա թագավորութեն կը վերջացուն, իր տղեն կը թալե ու կը փախի:

Դեր կը թալե կը փախե, ուր փագբանդ կը բերե կը կապե ուր տղի թկի վրեն:

Ըղի Պասրայու փաշեն կեղի:

Պապն օր կը թալե տղեն փախի, տղեն կը նկնա գերի:

Գերութենի մեջ կը մեծնա, կեղի քսան տարու:

Տղեն եղ տեխ կը պսակվի, ուրեն կնիկըն կառնե, քանիմ տարի եղ տեխ կ' ապրի:

Քանիմ տարի եղ տեխ ապրելուց սորա կիմանան օր ըղի Պասրայու փաշի տղեն է:

Տղեն կիմնա, օր զինք պիտի վնասին, կնկան կըսե. - Կնիկ, ես պիտի փախնճ ես տեխնեն, զիս կուգեն վնասել, իմ խետ կուգա՞ս, չըս իգա՞:

Կըսե. - Մարք, դու որ տեխ էրթաս, ես քո խետ կիգամ, ես քու թարկ չըմ խտա:

Գիշեր կելին եղ տեխնեն կը նկնին ճամբախ, կը փախին:

Կը փախին կուգան սարի մեջտեխ, կուգեն ըրիաթին, կը պառկին քիշըն քնին:

Կնիկ կը քնի, մարք կը նստի մուխյաթ կը մնա: Կնկա վիզ լի աղեկ անգին քարեր կեղի: Մարթու աչք օր կառնե ինք, կը հարձկե, օր աչքա:

Ինչպես օր կաչքա, թռչուն մը կը զարկե եղոր ծեռքեն կառնե կերթա: Դեր
օր կը տանի, ընդի կնիկ կ' թողե եղ տեխ քնու մեջ, ինք կէլի, կընկնի
թռչունքի ետև:

Ինը թող էնպես երթա ուրին օյլըրտի, մենք դառնանք կնկա վըրեն,
տեսնանք կնկա հալ ի՞նչ կէղի:

Մեկ քիչըմ հետ կնիկ կիմնա, կը տեսի օր ուր մարթ չկա, ծեռք կուտա
ուր վիզ, կը տեսի օր ուր վզի անգին քարերն էլ չկա, կասա. «Եղ ինչ
անքաղջ մարթ է էլի, օր առեր է զիմ քարեր, փախի, օր ըդ քարերու
համար էր, տուն թզը ուզեր՝ իտենք ուրին, ընծի չբերեր թողեր եղա
սարերի գլուխ»:

Կնիկ կէլի խեղճ-խեղճ կընկի ճամփու խետ, կիգա: Կիգա ճամբու
կես, կը տեսի օր մոլեմ են դիեն կիգա:

Մոլեն կը քռնե եղ կնիկ, կառնե կուգա ուր խետ, կուգա ծորում մեջ
կըսա կնկան. - Դու պետք ա ընծի ծեռք տաս:

Կնիկ կըսա. - Մոլա՛, ես քեզի ի՞նչպես ծեռ տամ:

Կասա. - Ձեռ կուտաս՝ տուր, շիտաս՝ քեզի կը սպանեմ:

- Մոլա, - կըսա. - Քելե երթանք եղա ջորու վոեն, քեզի լողկըցիմ,
սերսըցնեմ, դու քու Աստված, դու ընծի, ես քզի:

Կը տամի ջրի վոեն:

Կըսա. - Մոլա, դու դու տըկլոցի, ես քեզի լողկըցում, նոր դուն ընծի,
ես քզի:

Կնիկ դու գորի մ'եղի, կտրիճ եղի, մոլեն լողկըցնելու պես քարըմ
զարկ, գլուխ ջնջխա, մոլեն թող արնի մեջ, դու էլի ընկի ճամբախ ու
փախի:

Սահաթըմ կերթա, կը տեսի օր ծիավորըմ են տեխեն էկավ: Կաչքա օր
հարամին է:

Դարամին կիգա, կ'հասնի, կըսա. - Կնիկ, իլայի դու պիտի առնես
զիս:

Կըսա. - Դու գնա ծովի մեջ լողկըցի արի, օր գքզի առնեմ:

Դարամին օր կերթա ծով լողկընա, կնիկ կէլի շորեր կը հազի, ֆաս կը
դնե գլուխ, կը հեծի ծին ու յալլա, ո՞ւր իս քաղաք՝ եկա քի:

Կերթա ուր խոր քաղաք: Խեր կը տեսի, կըսա. - Աղչի, լառ, դու քու
մարթ իմալ էրիր, օր փախստ էկար:

Կըսա. - Վուալլա՞յի, գողեր թալեցին վըր մզի, զարկին իմ մարթ
սպանեցին, իմ վզի անգին քարեր տարան, խել անճախ փախսեր իմ էկի:

Մենք դառնանք Ամհատի վոեն:

Ահմատ կուգա քաղաքի մեջ կեղի հորթըրած, էնի թը ուր հորթըրածութեն էնի, մենք դառնանք Ահմատի պապու՝ Պասրայի փաշի վրեն: Մեկ քսան, եռուն տարի կընցնի մեջ, կը բերեն էնոր մեկլե տարաքեյութեն կուտան: Ընդա ժամանակըն կը նստի տարաքեյութեն կենե ուր քաղքի մեջ:

Ահմատ է օր կուգա եղ քաղքի մեջ, քան ու գործ օր կենե, լոզը կը շինա ուրին, կը կապէ սըրըխիմ ծեր ու կընկնա ծառերի հավքերու բների վլեն:

Յընց էն մեկ օր հավքում բուն կը կըտրտե, ուր կընկա անգին քարեր կէլին մեջ:

Իրիկուն հենց էնպես ուրախալեն կուգա ուր աղի տուն կը նստի, օր խաց ուտա:

Աղեն ալ մեկ խատ աղչիկ ուներ:

Եղ աղչիկն ա, սորվեր ա, ըմնօր իրկուն օր տղեն կուգա, կիզա կը հեծի եղ տղի վզի վրեն, ծոցեր կըօչիկ, սինծ-քան կը փնտոա: Ինչպես կեղի եղ օր, օր կուգա տղի ծոցեր կը փտրտըկե, ծեռք կը մտու տղի ծոց, եղ քարերը կը հանա, կը տանի շուտով կուտա ուր մոր:

Կըսա. - Մարե՛, տես եսօր մեր հորթըրած ընծի խորոտ քան-ման ա բերի:

Մամ կաչքե օր հըմեն մարգրիտ քար ա, կըսա. - Եղ ինչ խորոտ քան ա:

Տղեն խապար չունի, օր ախչիկ տարեր ա, գինա ուր ծոցն է: Կէրթա ուր տեխաց վրեն, մեջք կը հարձըկա օր քնի, կը տեսի օր քարեր չկան:

- Վա՞խ, - կըսա, - ես իմ քարեր էլ ու՞՞ գըտիմ, անջախ գըտեր ի. չուր ի լուս կուլա ու կէրերա:

Լուսմութ կէլի կը տեսի օր, քարեր աղի ախչկա վիզն է:

Կէրթա ծեռք կը քալի քաշե, օր ախչկա վզեն քարեր կըտրի:

Ախչիկ լալելեն կէրթա ուր մամուն կըսե. - Վուալլա, հորթարած իմ քարեր առավ:

Մամ կը վազի կուգա, կըսա. - Տղա, իմ ախչկա վզի քարեր հորի՞ն իս առի:

Կասա. - Զանը՞ն, եսի իմն ա, ե՞փ քու ախչկան եղի:

Կէլի կէրթա երկան կըսա. - Ըպա ինչ կըսես, հորթարած ախչկա քարեր գողցեր ա:

Աղեն կէլի կուգա, կըսե հորթըրածին. - Ծան լակոտ, եկար իմ տուն, գողութեն էլ կէնես:

Տղեն կըսա. - Զանըմ, եղի իմ կնկա մալն է, դրեցինք իմ ծոց, քու ախչիկ էկեր է խանեն:

Խոսքըմ էնորից, մեկ էնորից խոջամազ էն դեխ կը զանին իրարու, կեղի կոհիվ:

Խոջա տղեն կը զանի ախչիկա խոր գլուխ կը կըտրե:

Ախչիկա խեր կէլի կէրթա հուքմար՝ զանգատ կիտա, ըշրա ֆլան տղեն էկեր ա օր իմ տուն հորբըրածութեն կէնա, իմ ախչիկա վզի քարեր գողցեր եր, զարկեց իմ գլուխ կոտրեց:

Տղեն կը բռնեն էն դեխեն, կը տանեն թալեն բռնատուն:

Տղեն մեկ տարի կը մնա բռնատան մեջ, ինչպես կէղի եղ մարթ կը մեռի:

Դու մ' ասի եղ քաղաք լե տղի խոր քաղաքն ա, տղեն խարար չունի:

Մարթու կնիկ կէրթա շուտով հուքմըրին խարար կուտա, ըպջ չըսիք իմ մարթ մեռավ:

Կըսին. - Ինչի՞ քու մարթ մեռավ:

Կըսա. - Էն հորթարած օր զարկեց իմ մարթու գլուխ կոտրեց, հոնկուց մեռավ:

Կասին. - Դորի՞ զարկեց, քու մարթու գլուխ կոտրեց:

Կնիկ կըսա. - Ին տուն գողութեն երաց, էն ու իմ մարթ կովան, զարկեց կոտրեց, մեռավ:

Կըսեն. - Ըպա հըմկա էն մարթ ու՞ դեխն ա:

Կըսին. - Էն մարթ էն վախտ զանգատ երինք, բռնին թալեցին բռնատուն, հըմա մեռեր է՞, սադ է՞, չընք գինա:

Կէրթան բռնատուն կը քննին, զեղ մարթ կը գտնին:

Մարթուն կըսեն. - Ելի երթանք, եսօր քեզի դատաստան կէնեն:

- Դե՞յ, - կըսե, - իմ տավրան չափուկ Ահմատի տավրան ա. անգահ կուգա ճամբու վրեն:

Կառին եղ մարթ կուգան դատարան: Դատարան էնդրան կը խարցու.

- Դորի՞ զարկեցիր ֆելան մարդ սպանեցիր:

- Ե՞յ, - կըսե, - իմ տավրան չափուկ Ահմատի տավրան ա, անգահ կուգա ճամբու վրեն:

Կըսա դատավոր ընդոր. - Քու գլխու գալածն ըսա, չէ հըմկա քեզի կախաղան կը խանիմ:

Ծոյի իր գլխու գալած բոլոր պատմեց դատարանին:

Որ պատմեց դատարանին, թաքավորի սիրտ խղճաց վրեն: Ինչ օր ուր արունք եղներ, բայց ճարըմ չկրցավ գտներ, հեղըմ խրատ եր տվի:

- Դը, - կըսե թաքավոր, - մագամ օր կը տանք եղ տղին կախեք, իմ առջևով բերեք ընցուցեք, տարեք, - են խըդար օր Ծիկար կը վառվեր:

Տղեն օր տըկլոզցուցին, կախելու շորեր կը հագուցնեն, տեսան օր տղի թեկ վրեն փազբանդըն կա կապուկ:

Ասին. - Տղա՛, ես ի՞նչ փազբանդ ա քու թեկ վրեն:

- Ե՛, - ասաց. - իմ տավրան չափուկ Ահմատի տավրան ա. անգահ կուգա ճանապարի վրեն:

Բազբանքի վրեն աչքեցին, օր գրուկ է՛ Բասրայու փաշի բազբանքն ա: Ղենց եղ, փազբանքն առան, էկան ու փաշին տվեցին:

Փաշեն աչքեց, օր ուր փազբանքն ա: Ասեց. - Եղ տղեն խեղտեր ե՞ք, թը դոր չը խեղտեր է:

Ասին. - Տարած են կախարանի հառեց, պիտի խեղտեն:

Ասաց. - Ի սեր Ասսու, զացեք եղ տղին փրցուցեք ու ընծի բերեք:

Շուտ խասան տղեն փրցուցին, բերին տվին փաշին:

Փաշեն տղին խարցուց. - Տղա՛, դու ո՞րոեղանցի ես:

- Ե՛, - ըսեց, - փաշա, իմ տավրան չափուկ Ահմատի տավրան ա, անգահ կուգա ճամբու վրեն: Իմ դարտին դեղ անող չկա. օր էնող եղի, իմ գլխու գալածը կը պատմեմ:

Փաշեն ասաց. - Ես քու դարտին դեղ կէնեմ, քու դարտ ընծի ասա:

Ասաց. - Ես իրեք տարեկան ի, իմ խեր փաշա էր: Էլան իմ խոր վրեն կրիկ: Իմ խեր ընծի առավ ու փախավ ու մեկ մարթ ընծի վերուց ու տարավ: Տարավ ընծի տիրեց, մինչև էրաց տասնուիսինգ տարեկան: Էլավ ընծի էն տեխ պսակեց: Ես շատ խոջախ տղա ի, շատ աչքը բաց տղա ի: Մեկ կինըմ էկավ, ուր բալեն տվեց ընծի, իլայի՝ ընծի պիտի եղիս սիրական: Իմ խեր ընկավ իմ միտ, ես իմացա օր ես փաշի տղա ի: Էլ ես չուզի իմ կաթ խարմի: Ասի. «Պիտի իմ խալալ կաթի, իմ արնի վրեն պիտի մեռնիմ ես»: Մեկ տարի եղ կնիկ ընկավ իմ ետև, իմ խետ ճար չերեց, կնիկ ընկավ իմ ետև, օր տեր ընծի սպանել: Ես իմացա, օր ընծի պիտի սպանեն: Էլա իմ կնիկան ըսի. «Կնիկ, ես եղա տեխտեն կերթամ, դու պիտի գա՞ս խըտ ընծի, թե՞ չպիտի գաս»: Իմ կնիկ ընծի ըսավ. «Մարթ, դու դոր կերթաս, ես քու թարկ չըմ խտա»: Ես ու իմ կնիկ գիշերով էլանք փախանք:

Փախանք ու գիշեր էկանք սար: Իմ կնիկն ըսեց. «Մարթ, ընծի քուն կուգա, ես պիտի քիշըմ քնիմ»: Իմ կնիկն օր քնավ, ես իմ կընկա վիզն աչքեցի, տեսա օր էնդոր վիզ շարքըմ մարքարտե քար կեր: Յարձըկեցի եղ մարքըրտե քարեր, ըսի՝ աչքեն տեսնամ՝ ես ի՞նչ բան ա: Մեկ էլ տեսնամ՝ թռչունքըմ զարկեց, իմ ծեղքեն առավ ու գնաց: Թողեցի կնիկս էնտեխս քնած ու ես ընկա թռչունքի ետև: Իմ տավրանս չափուկ Ահմատի տավ-

բանն ա, անագա կիզա վըր ճամբու: Եկա ես քաղաքի մեջ եղա հորթըրած, լոզըմ շինեցի ընծի ու ինչքան օր թոշունքիմ՝ բուն կեր՝ կտրտեցի ու իմ քարեր գտա, դրեցի իմ ծոցքն ու էկա իմ աղի տուն: Իմ աղի ախչիկ էկավ իմ ծոցքեր աչքեց, իմ քարեր գողցեր եր տարեր, ես խարար չեղի, իրիկուն գացի: Իրիկուն գացի օր թա պիտի քնի, աչքեցի օր իմ քարեր չկան: «Ա՞յս ու վախ, ըսի, - ես իմ քարեր դո՞ր կուրուսի»: Եղա եղավ իրեք տարի՝ ծորով գտի: Գիշեր մինչև լուս լացի ու կոծվա: Խը լուսուն էլան տեսա, օր իմ քարեր աղի ախչիկ վիզն է, ես ծեռ թալի օր պիտի աղի ու աղի ախչիկ էլաց, գնաց իր մամուն ասաց. «Ա՞յս, մարե, հորթըրած իմ քարեր առավ»:

Մամն էկավ ու զարկեց իմ գըլխուն. «Քու պատանք կարեն, գո՛յ, իմ ախչիկ քարեր հո՞րին ես գողցեր»: Ես ասի. «Ես իմ քարերն ա, քու ախչիկան չէ»: Գնաց ու շուտ ուր երկան ասաց: Երիկն եկավ ինձ տվեց առջև ու զարկեց. «Տո՛, շան տղա գո՛յ, իմ ախչիկ քարերն հո՞րին ես գողցեր»: Ես ասի. «Ալա, ես իմն է, իմ կընկան է, քու ախչիկան չէ»: Ես ու էնի կովանք, դե իմ սրտիս հերսեն հ՞նչպես եղավ փետուն զարկի եղոր քիսան, էնոր գլուխ, ու եղ անաստված գնաց հուրմըրին խարար տվեց, ես իրեք տարի անմեղ տեղ ընծի թալեցին բռնատուն: Մարք իմ վրեն հարցնող չեղավ: Էսօր էլ դու հրամայեր ես, օր ընծի տանեն խեղտին: Իմ տավրան չափուկ Ահմատի տավրան ա, անգան կուգա ճամբու վրեն: Կամք քոնն է, կուզես խեղտե, կուզես ազատե: Իմ զիխուս գալածն էլ ես է, իմ վիճակն էլ ես է: Թեզի պատմեցի՝ օղորմած էղի ու ընծի ազատա:

Ինչպես օր տղեն ասաց, էլ եղ մարթու սիրու չտարավ՝ աման ինք լաց ու գինք թալեց տղու վիզ:

- Մեռնիմ թեզի, Աստված, դու ինչպես իմ գերին ազատեցիր, բերիր էծգիր իմ ծեռը:

- Դա՛, - ասաց, - զավակս, մը վախենա, քու խեր Պասրայու փաշեն օր կըսին, ես իմ:

Նոր էտեխեն ժողովրդին խրաման տվեց, ասաց. - ժողովուրդ, ելեք, կանեք ոտքի վրա, ծեզի բանըմ կըսիմ, անկած էնեք:

Ելավ փազբանք բացեց ու ժողովոդի առեջ կարդաց: Ու ըսեց.

- Իմանաք օր եսի իմ տղեն ա: Բոլոր ժողովուրդ, ինչպես Աստված ինձ էսօր միսիթքարեց, Աստված ծեզ էլ էղպես միսիթքարի:

Ելավ ժողովրդին խրաման երեց ու խինգ տարի թարխընութեն ու տղի խարդի համար:

- Նորեն դուք գացեք ծըր տներ, ես պիտի առնեմ իմ տղեն, էրթամ իմ տուն ուրախութեն էնիմ:

Առավ ու գնաց ուր կնկա մոտ: Կնիկ հալա խարար չուներ:

- Կնիկ, - ըսավ, - իմ անգճկլեն ի՞նչ կիտաս, քեզի մեկ բարի ջուհար ըմ իտամ:

Կնիկն ըսեց. - Մա՛րթ, ի՞նչ անգճկալիկ պիտի իտաս, միթե իմ տղեն ա էկի:

- Խա, խա, կնիկ, քու տղեն ա էկի, քու տղի ավետիքն ա կուտամ: Ըսան. - Ներքսև անցի:

Ինչպես օր Ահմատ մտավ ներս, կնիկ լալեն ու գոռալեն ընկավ տղի վըզնընը ու տղի երեսներ, ու լաց պագեց տըղի երեսներ:

Ըսեց. - Իմ հեսիր, որու վզու իմ աշքերուն եկար, իմ սրտի խովանք դու է՞ր կորուսեր:

- Մարթ, - ըսեց, - Աստված ի՞նչպես մեզի լուս էրեց, բոլոր աշխըրկին լե հըմլա լուս էնա:

Առավոտ ելավ էդ տղի խեր ու պղնձներ դրեց վրեն, մատադ էրեց տվեց խաֆիր-խուփարին՝ ուր տղի խաթրի համար:

Խեր տղուց խարցուց. - Զավակս, քու տղեն ո՞ր տեխացի է:

Տղեն ըսեց. - Արո՛, վալլահի ուր քաղքի անուն չեմ գինա, բայց ես կանամ երամ էնտեխ:

Ելավ լուսուն խարսնից պատրաստութեն տեսավ ու ելավ քառասուն մարթ դրեց ուր տղի խետ՝ էն բոյին, ինչ բոյ օր տղեն էր: Բերեց զուր անուն լե գրեց թղթի վրեն, տվեց ուր տղին: Տղեն ելավ ու բռնեց աներոջ տան ճամբախ, գնաց: Օր գնաց աներոջ տան մոտեցան, տեսան քառասուն ծիավոր էնտեխսն կուգան: Գնացին էրոնց առեց ու բերեցին իջուցին: Տեսան օր ըմեն էլ թաքավորական կարգով կը նստեն ու կանեն:

Տղեն տեսավ օր ուր կնիկ էնդիեն կուգա. կզակ գետին իր մտկի մեջ Աստծուն շուքը տվեց. - Փա՛ռք իմ Աստված, չէ՛ իմ կնիկ սաղ ա:

Ժողովուրդն ըսեց. - Էդ ի՞նչ էր, օր դու շուքը տվիր:

Ըսավ. - Մեկ բանըմ մտքիս շուքը տվի Աստծուն:

Մնաց իրիկուն, աներոջ մոտեն խարցուց, ըսաց. - Ես կնիկ վի՞ր կնիկն ա:

Աներն ասաց. - Իմ գլուխ մի ցավցու, իմ դարդեր շատ ա:

Ասաց. - Քու դարդն ի՞նչ ա, խնդրեմ ինձ ասա:

Ասաց. - Եղի իմ ախչիկն ա. տվեցի եղի մեկ մարդում ա, չգիցանք ինչ գեց մարթ էր, տարավ ճամբախ, իմ ախչիկ թալնեց ու ինք թողեց փախավ, գնաց: Իմ ախչիկն էլ ես խիմա կուգեմ կարգեմ: Կըսե. «Չէ՛, իլայի քանի օր ես իմ մարթ չըմ տեսերի, ես չըմ կարգվի», - ասաց, - իմ ախչկե դարդն էլ ես է:

Ահմատն ելավ ու բռնեց աներոջ ծեռ պագեց: Ասաց. - Խայրիկ, եսա
թուղթ կարթա, խասկի:

Խոր թուղթ տվեց աներոջ ծեռք: Յեր կարդաց՝ իմցավ օր եղի ուր
փեսան ա: Ելավ ըրոնեց տոյի երես ու պագեց:

Ըսեց. - Որքի, դու Վըր իմ աչքերուն էկար:

Ասաց. - Ինչպես դու իմ գերին ազատեցիր ու ընծի ուրախցուցիր,
փառքը քե՛ Աստված, փառքը ամեն ոռքերն ել ու օռքու պես ուրա-
խացնես, - ու գնաց ախչեն խարար տվեց:

Ըսեց. - Օրքի, արե քու նշանածն էկեր է:

- Ա՞ն, արո, - ասեց, - խոն բերան չէ՝ ավետարան է, եդ օր կարելի է՝
ես տեսիմ:

Յերն բռնեց ախչեն ծեռք, տարավ էրկա մոտ: Էրիկն օր գուր կնիկ
տեսավ, երկուսն ել լացին, փարվան իրարու վիզ ու Աստծուն շուքը տվին:

Ախչկա խերն է ելավ խինգ օր փեսից օր առավ ու խինգ օր ուր
ախչկա օոք ու ծեռք տեսան: Ելավ դրեց ճամբու, եկան Պասրայու
քաղաք ելան դուրս:

Փաշեն օր տեսավ խարսնիսն էկավ, ելավ դոլ ու գուրնեն զարկեց,
գնաց հառեց: Բերեց իջուց, նոր բռնեց խարսնիս:

Յորն օր զարկին ու խաղցան: Ենոք հասան ուրանց մուրազին:

Ասուց իջավ իրեկ խնձոր՝ մեկ ասողին, մեկ գրողին, մեկ էլ եդ բան
սարքողին, որ տվեր է հեքիաթներ գրել:

